Անհատական պահատեղեր վարձակալելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձիք.

- Անձը հաստատող փաստաթուղթ,
- Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ (չունենալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք) (տվյալ փաստաթուղթը կարող է չպահանջվել, եթե Բանկը ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով՝ «Նորք» ծրագրի բազայից)

Իրավաբանական անձիք.

- Եթե Բանկում ունեն հաշիվ, ապա կազմակերպությունը ներկայացնող անձի անունով պահատեղից օգտվելու լիազորագիր,
- Եթե Բանկում չունեն հաշիվ, ապա ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բանկային հաշվի բացման և սպասարկման» կարգով բանկային հաշվի բացման համար պահանջվող փաստաթղթերը (լիազորագիրը նոտարով հաստատված):

- ✓ ՀՀ քաղաքացիների համար անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, վերադարձի վկայական՝ միայն ՀՀ վերադառնալու համար, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ կամ ժամանակավոր վկայական, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիր, ծննդյան վկայական,

- ✓ ապաստան հայցողի համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայական, փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ,

- ✓ օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիր կամ ճամփորդական փաստաթուղթ (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,

- ✓ քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթ, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական, ՀՀ-ում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթեր՝ մշտական կացության քարտ, ժամանակավոր կացության քարտ, ՀՀ հատուկ անձնագիր,

- ✓ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

Հանրային ծառայությունների համարանիշը պարունակող փաստաթուղթ՝

- սոցիալական քարտ կամ
- ՀՀ քաղաքացու նույնականացման քարտ կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող օտարերկրյա քաղաքացու՝ ՀՀ կացության քարտ (առկայության դեպքում) կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող ՀՀ-ում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթեր կամ
- հանրային ծառայությունների համարանիշը պարունակող տեղեկանք: